ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 382-Ա « 01 » փետրվարի 2024թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 11.12.2023 թվականին հայտարարված ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 ծածկագրով Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների 2024 թվականի կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՍՈՍ ՀԱՅԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ԱՁ-ն (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայել է հրավերով պահանջվող ապրանքների ընդհանուր նկարագիրը սահմանող թիվ 1.1 հավելվածը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն եղել էլեկտրոնային ստորագրությամբ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 27.12.2023 թվականին Մասնակցին ծանուցվել է հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետով՝ Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարությունը 29.01.2024թ. հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «ՍՈՍ ՀԱՅԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ